ԿՅԱՆՔԻ ԱՐԺԵՔԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ԻՆՔՆԱՄԲՈՂՋԱՑՄԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ

ՄՈՔՈՅԱՆ Հ. Շ.

Յուրաքանչյուր անձի համար սեփական կյանքն այն անփոխարինելի արժեքն է, որն իրապես պայմանավորում է անհատի սոցիալական կեցության արմատական հիմքերը: Կյանքը փիլիսոփայական իմաստով գոյության եղանակ է, որի մեջ տվյալ ամբողջի մասերի բազմությունը և ձևերի տարբերությունը կապված են այնպիսի հայտնի նպատակահարմար և միասնական կապով, *որը գտնվում է ո՛չ թե դրսից ենթադրվողի, այլ հենց իր այդ (օրգանական) ամբողջության մեջ*[1]: Պատմական փորձն ապացուցում է, որ մարդկային անհատի կյանքի ազատ և անկաշկանդ զարգացումը ո՛չ միայն բարու, այլև չարի աղբյուր է, և հումանիզմն, իբրև անհատականության ազատ և ներդաշնակ դրսևորման ելակետ ու սկզբունք, իր ճշմարտացիությունը սոցիալական ժամանակահատվածում պահպանում է այնքանով, որքանով կարողանում է պահպանել և զարգացնել համամարդկային բարոյական ու բանական իմաստը: «Այստեղ արժեքային և հումանիտար մոտեցումը,- նշում է Ի. Ֆրոլովը, համընկնում է սոցիալականի հետ»[2]: Սոցիալ-պատմական դարաշրջանների օբյեկտիվ զարգացումը պայմանավորում է նաև կյանքի որոշակի պայմանների հարաբերական տարբերություն, որն իբրև անհրաժեշտ գործոն որոշում է այդ ընթացքի այն ընդհանուր սոցիալական նվաճումների յուրահատկությունը, որոնք անձի համար բարոյահոգեբանական հիմք են դառնում, որով նա պիտի կարողանա այդ դիրքից ճիշտ գնահատել և՛ իրեն, և՛ իր պրակտիկ գործունեության անմիջական հետևանքները: Պատմականորեն անառարկելի ճշմարտություն է նաև այն փաստը, որ տնտեսապես տիրապետող խավերի սովորությունները, նիստուկացը, ներսոցիալական հարաբերությունները, և ապրելաոճն ընդհանրապես, բոլոր ժամանակաշրջաններում և միշտ ընկած են տվյալ սոցիալական հարաբերությունների մակերեսին ու ձեռք են բերում այդ ժամանակահատվածն արտացոլող այնպիսի պատկերացումների և բացարձակ ճշմարտությունների իմաստ, որոնք մշտապես պահպանվում և ժառանգվում են որպես հոգևոր արժեքներ: Եվ նշված խավն այդ ընդհանուր պատկերացումներն ու բացարձակ ճշմարտություններն օժտում է օրենքի ուժով՝ մշակելով այնպիսի նորմեր ու կանոններ, որոնց միջոցով հասնում է այնտեղ, որտեղից սկսում է առանձնացնել իրեն հատուկ արժանավայելությունը, ազնվաբարոյությունը, զինվորական արիությունը, գործարար հատկանիշները և այլն: Այդ պատկերացումներն զգալի

---

[1] Տե՛ս *Энциклопедический словарь, т. XI, СПб., 1893, с. 948.*

[2] **Фролов И. Т.**, *О человеке и гуманизме. Работы разных лет, М., 1989, с. 479.*

պատմական փոփոխություն են կրում կյանքի պայմանների և հասարակական հարաբերությունների դինամիկ փոփոխման հետևանքով: Այսպես, օրինակ, XV-XVI դդ. ազնվականն անպատվաբեր ու անթույլատրելի էր համարում առևտրով և ֆինանսական գործունեությամբ զբաղվելը՝ գտնելով, որ դրանք իր կյանքի արժեքը նսեմացնող, իր համար բոլորովին ոչ ազնվաբարո և անիմաստ զբաղմունքի ձևեր են: Սոցիալական հիերարխիայի վերին աստիճանում *գտնվող* «*ընտրյալների*» *խմբային չափանիշներին* չհամապատասխանող ապրելակերպը ներկայացվում էր որպես ոչ բարձրարժեք կեցություն, որ գերաճում – հասնում էր այլ ժողովուրդների և ազգերի ֆիզիկական և բարոյական գոյության անտեսման: Նեղխմբային մշակույթը հանգում է ծայրահեղ հոգևոր բարբարոսության, որի բազմաթիվ օրինակները քիչ չեն նաև մեր դարաշրջանում: Այսօր, այսպես կոչված, «կենսաբանական դարում»[3], մարդկային անհատականության փոփոխության առումով[4] դրսևորվում են թե՛ հոռետեսական և լավատեսական, թե՛ հետադիմական և առաջադիմական մոտեցումներ, որոնք իրարամերժ և խիստ փոխբացառող իմաստասիրական և գիտական տեսակետներ են: Այս առումով կարելի է նշել գերմանացի փիլիսոփա-էկզիստենցիալիստ և հոգեբույժ Կ. Յասպերսի այն միտքը, որ «մարդը կանգնած է երկընտրանքի առաջ՝ կա՛մ մարդկության կործանում, կա՛մ մարդու փոփոխություն»[5]: Ա. Կեստլերն ամենուր ջանում է Յասպերսի դրույթին տալ, այսպես ասած, զուտ կենսաբանական բնույթ և յուրատիպ մարդաբանական տեսանկյունից պնդում է, *որ մարդը* «*էվոլյուցիայի սխալն է*», որ բնությունը նրան օժտել է բազմաթիվ բացասական ժառանգական հատկանիշներով, որոնց որոշիչ դերը ո՛չ միայն չի բացառվում անձի սոցիալական վարքի ձևավորմամբ, այլև դրանց վերացումը հնարավոր է զուտ ժառանգական մեթոդներով ու եղանակներով: Այստեղ մեր առաջ հառնում է այսպես կոչված արհեստական մարդու նախագծման գաղափարը կամ XXI դարի մարդու յուրօրինակ ճարտարագիտությունը, որն իր գոյության պատմությամբ և ընդհանուր ուղղվածությամբ այնքան տարիք ունի, որքան ինքը մարդը՝ իր երևակայությամբ և աշխարհըմբռնմամբ: Սկզբնական շրջանում մարդու ծագումն ու ձևավորումը նման է աղոտ, առասպելներով միախառնված զգացմունքների: Հետագայում հասարակական արտադրության ինքնամբողջացնող և արժեհիմաստավորող առաջադիմությունը մի կողմից, և աշխատանքի բոլոր ձևերի սոցիալական բովանդակության դերի օբյեկտիվ բարձրացումը մյուս կողմից, սկզբնավորեցին մարդկային եզակի անձի բացառիկ կյանքի արժեքն ամբողջացնող այն նախադրյալները, որոնք արմատապես սահմանեցին ոչ միայն ժամանակակից աշխարհի հոգևոր և տեսական խոր կերպարանափոխումը, այլև դրան բնորոշ այն առանձնահատկությունը, որն իրավամբ համարվեց յուրաքանչյուր մարդու

[3] Տե՛ս **Фролов И. Т.**, *Жизнь и познание, М., 1981.*

[4] Տե՛ս **М эттсон П.**, *Регенерация – настоящее и будущее, М., 1982.*

[5] **Jaspers K.**, *Philosophie end Welt, Mьnchen, 1963, S. 133.*

կյանքի արժեքի ըմբռնումն իմաստավորող իրական առաջընթաց: Այդ գործընթացի երկրորդ կողմն ինքնամբողջացվող անձի կողմից կյանքի արժեքի մասին սեփական պատկերացումների նշանակալի փոփոխությունն է, որի գիտակցումը և իմաստավորումը վերաբերում են ոչ միայն պարզագույն ֆիզիկական գոյության ներկայացմանը՝ որպես արժեքի, այլ որպես բազմակողմանի և հոգեպես հարուստ՝ էությամբ լի մարդուն արժանի կյանքի ներկայացմանը. կյանք, որն ունի պարբերաբար և հավերժ կրկնվող այնպիսի իմաստ, որի նորմերն ու չափանիշներն իրենց օբյեկտիվ դրսևորումն են ստանում ժամանակակից անձի՝ որպես արդի ժամանակաշրջանի համամարդկային կոլեկտիվ սուբյեկտի մեջ[6]: Որքան հուսալի է անձի սոցիալական ինքնամբողջացման կուլտուրան, որքան բարձր և ճկուն է դրսևորվում նրա սոցիալական ակտիվությունը, այնքան նա ավելի անմիջական և ավելի խորը ազդեցություն է թողնում հասարակական կյանքի վրա: Այն անհատը, որը փորձում է իրեն բարձրացնել ուրիշների մարդկային արժանապատվությունը ոտնահարելու, նսեմացնելու կամ հեղինակազրկելու ճանապարհով, մի «գեղեցիկ» պահի, ինքն է հայտնվում մարդկային հիմնարժեքից՝ արժանապատվությունից զրկվածի նսեմացված վիճակում: XX դարում մարդկությունն ականատես եղավ թե՛ ռասիստական, թե՛ ֆաշիստական կարգախոսների «*նպատակասլաց-մեթոդական*» զարգացմանն ու այսպես կոչվող «հատուկ որակների» մշակման մտացածին գաղափարներին: Որակներ, որոնք վաղ թե ուշ պիտի որ ապահովեին իր նմանների նկատմամբ անվերապահ ֆիզիկական և բարոյահոգեբանական տիրապետության հաստատումը: Ցավոք, անցնում է որոշ ժամանակ և մարդիկ հարմարվում ու հոգեբանորեն հաշտվում են իրողություն դարձած բարոյական և սոցիալական այնպիսի բացասական երևույթների, որոնք աստիճանաբար օրինականացվում և իմաստավորվում են մարդկանց գիտակցության մեջ՝ որպես դրական հատկություններ: Դա հանգեցնում է անհատի համապատասխան հոգևոր ձևավորմանը, երբ նա արդեն ներքուստ արդարացված է համարում իր ձեռք բերած որակները և աստիճանաբար դադարում հանցավոր արարքների համար խղճի խայթ զգալուց: Միանգամայն անհեթեթ կլինի դաժանության և ստորության արմատները փնտրել միայն մարդու կենսաբանական բնույթի մեջ, բայց չի կարելի նաև անտեսել բանական, խելամիտ, մարդասիրությամբ և իսկական քաղաքացիությամբ *ամբողջացված մարդուն:* Այստեղ չի կարելի չհիշատակել հանրաճանաչ կենսաբան Բ. Աստաուրովի մարգարեական խոսքերը. «Հարկավոր է ցանկանալ և հավատալ, որ այն չափով, երբ մարդն առավել բանականորեն է միջամտում իր շրջապատին և իր համար ստեղծում ավելի կատարյալ կյանքի միջավայր, և այն չափով, երբ նա կսկսի գտնել իր ժառանգականության կատարելագործման առավել մարդասիրական և

---

[6] **Скворцов *В.,*** *Культура самосознания: человек в поисках истины своего бытия, М., 1989, с. 206.*

արդյունավետ ուղիներ, չարի ու խավարի պտուղները կնահանջեն բարու և լույսի առջև»[7]:

Կյանքի հայեցակարգը և նրա ճանաչումը նախագծել է անգլիացի փիլիսոփա և սոցիոլոգ, պոզիտիվիզմի ներկայացուցիչ Հերբերտ Դերբի Սպենսերը: «Կյանքը կարելի է սահմանել որպես ներքին հարաբերությունների մշտական հարմարեցում արտաքին հարաբերությունների նկատմամբ»[8]: Ընդ որում, կենսականը ոչ կենսականից տարբերվում է արտաքին պայմանների նկատմամբ նպատակադիր հակազդմամբ՝ «կյանքի մակարդակը փոփոխվում է համապատասխանության աստիճանի փոփոխության համաձայն…»[9]:

Էթնիկական խմբերի ձևավորման դարաշրջանի պատկերացումների համաձայն՝ արարքի ճիշտ ընտրությունը որոշում է մարդու բախտը և, որպես կանոն, որպես կյանքի նորմ, պայմանավորված է առանձին անհատների և ժողովուրդների կեցության նկատմամբ աստվածների անմիջական և ակտիվ միջամտությամբ: Այս պատկերացումը որոշակիորեն ներգործեց քրիստոնեական և փիլիսոփայական հումանիզմի վրա (Թալես Միլեթացի, Պյութագորաս Սամոսացի, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Մագիստրոս): Ըստ այդմ, մարդու կյանքը նրա կեցության ճշմարիտ կողմը բնորոշող ելակետային հիմքն է: Նման պարագայում բարոյականության սկզբունքներն իրենց հերթին վերածվում են մարդկային իրական հարաբերությունների և կյանքի իմաստն արտացոլող այնպիսի համընդհանուր նորմերի, որոնք ուղղակիորեն արտահայտում են անձի էությունը՝ աշխարհայացքը, մտավոր կարողությունը, այսինքն՝ նրա սոցիալական որակը: Այդ իմաստով բնութագրական է միջնադարի վերջին և միաժամանակ Վերածնունդի առաջին պոետ Դանտե Ալիգիերիի այն ըմբռնումը, որ կոնկրետ մարդկային անհատների բախտը «հավերժ» հանդերձյալ աշխարհում կազմավորվում է՝ կախված երկրային կյանքի արարքներից, և որ դրանցով է պայմանավորված մարդկանց բախտի բազմաձևությունն «այն աշխարհում» և նրանց կեցությանը յուրահատուկ □հիերարխիան□: Դժոխքում, քավարանում և դրախտում, մարդիկ տեղավորվում են ըստ իրենց բարոյական արժանիքների: Դժոխքը բաղկացած է տասը բոլորակից, որոնք առաջացնում են վայր իջնող մի այնպիսի յուրաձև կոնուս, որտեղ մեղսագործներն արդեն տեղավորված են ըստ իրենց բարոյական մեղքի աստիճանի և կրում են համապատասխան տառապանքներ: Իսկ դրախտում, ըստ մեծ իտալացու, անհատները տեղավորվում են *վեր բարձրացող ինը երկնքի կառուցվածքով*՝ նրանց ազնվաբարո արարքների վեհության համապատասխան: Բարոյական ընտրությունը *մարդու հոգևոր արժեք է և ինքնամբողջացման ձևավորման* դրական գործոն, որը, միաժամանակ, նշանակում է մարդու բախտի

---

[7] **Астауров Б. Л.,** *Homo sapiens et humanus-человек с большой буквы и эволюционная генетика человечности (Новый мир, 1971, N 10, с. 224).*

[8] **Спенсер Г.,** *Сочинения, т. 1, СПб., 1899, с. 48.*

[9] Նույն տեղում, էջ 64:

այնպիսի սահմանում, որն ամբողջովին կախված է այն բանից, թե նա կտեսնի՞ արդյոք «թեկուզ ստվերն արքայության սրբազան», *ճշմարտության «փառահեղ լույսն ամեն շարժման ակունքի», որն արդարություն և ճշմարտություն է սփռում, որի մեջ էլ պարփակվում են ողջ Տիեզերքով մեկ անվերջ տարածված ուժը և սերը, որոնք համաձուլվելով՝ միասին կազմում են էությունը և պատահականությունը:* Մարդկային հոգին, հաղորդակցվելով ճշմարտության լույսի հետ, դառնում է այնպիսին, որ «ճշմարտության լույսը, որով ապրում են, թույլ չի տա, որ նրանք լինեն պարտազանց»[10]: Բարոյականության բարձրագույն գաղափարը՝ *ճշմարտության լույսը,* մարդու արարքները լցնում է օբյեկտիվորեն գնահատելի համամարդկային, սոցիալական իմաստով, որտեղ բացահայտվում է սոցիալական սուբյեկտի՝ անձի ինքնամբողջացման ճշմարտության կարևոր պահը: Ինքնամբողջացման տեսական հիմքը ինքնագիտակցվող, ինքնաձևավորվող և ինքնաճանաչող անհատի ինքնահաստատումն է, որը պետք է կրի համընդհանուր բնույթ: Հետևաբար, յուրաքանչյուր անհատ պարտավոր է իր կյանքի ընթացքում սրբորեն հետևել այդ սկզբունքին: Եվ եթե անձը փորձի շեղվել այդ ընդհանուր չափորոշիչ սկզբունքից, ապա դրանով իսկ նա կորցնում է կեցության ճշմարտությունը ներկայացնելու թե՛ բարոյական, թե՛ սոցիալական իրավունքը: Սոցիալական սանդուղքի վերին աստիճաններին գտնվելը որոշ անհատների բոլորովին հիմք չի տալիս նշանակալի բարոյական, վերմարդկային այնպիսի արտոնությունների, որոնք ճանապարհ կբացեին ընդհանուր համակեցության կանոնների ու նորմերի խախտման համար: *Ճշմարտության լույսից* հեռանալը յուրաքանչյուրին դարձնում է ոչնչություն, անկախ այն բանից, թե նա Երկրի վրա գոյություն ունեցող սոցիալական հիերարխիայի մեջ ինչ տեղ, ինչ դեր ու դիրք է զբաղեցնում: Հենց այս տեսանկյունից էլ Դանտեն դատապարտում և անարգանքի սյունին է գամում Հռոմի այն պապերին, որոնք իրենց անազնիվ և անվայել արարքներով դավաճանել և մոռացության են տվել բարոյական հավատի ճշմարտությունը[11]:

Ըստ Դանտեի՝ մարդու կյանքի արժեքը բնորոշվում է նրա բարոյական կատարելագործման մակարդակով: Բայց ինչպե՞ս հասկանալ այդ կատարելագործումը կոնկրետ կեցության և կյանքի կոնկրետ հանգամանքներում: Չնայած չար և անբարոյական անհատների ուղղակի դիմակայությանը, այնուամենայնիվ, մարդը կարողանում է չարին հաղթահարելու ուժ գտնել: Բարոյական մարդը, երբ իր արարքներում հետևում է բարու, համամարդկայինի ընդհանուր սկզբունքներին և նորմերին, ապա վաղ, թե ուշ շատերի համար մի տեսակ ձգողական կենտրոնի է վերածվում, և մարդիկ նրան գնահատում են ո՛չ նրա բնությունից օժտված հատկանիշների՝ ուժի, գեղեցկության, հմայքի և ո՛չ էլ

[10] Տե՛ս **Ալիգիերի Դանտե,** Աստվածային կատակերգություն, Ե., 1969, էջ 381, 382, 394:
[11] Նույն տեղում, էջ 105-106:

ունեցվածքի համար: Նրա արժեքը պարզապես ինքնամբողջացնող բարոյաիմաստասիրական այն որակների մեջ է, որոնք անձը զարգացնում և կատարելագործում է իր աշխատանքային փորձով՝ սեփական համոզմունքները վերածելով կայուն բանական դիրքորոշման՝ լինի նա գիտնական, բժիշկ, ինժեներ, գրող, թե հրապարակախոս: Այլ խոսքով ասած՝ ոչ բոլորին է բախտ վիճակվում ձեռքում ունենալ *համամարդկային ճշմարտության ոսկե բանալին,* բայց յուրաքանչյուր մահկանացու կարող է ազնիվ մարդկային նվիրվածությամբ մինչև իր կյանքի վերջը ծառայել ճշմարտությանը:

Իսկ արդյո՞ք այսօր անհատն ի վիճակի է կանխատեսելու գիտելիքի օգտագործման ռացիոնալ եղանակները՝ հօգուտ իր նմանների կյանքի արժեքի իմաստավորման: Արդյո՞ք բոլոր հնարավոր միջոցները արդարացված են և թույլատրելի, եթե դրանք տանում են դեպի ճշմարտություն: Մարդկային պատմությանը հայտնի են անհատների կյանքին սպառնացող այնպիսի ոճրագործություններ, որոնք կատարվել են □հանուն գիտության□ նշանաբանով: Այսպես, օրինակ, XIX դ. կեսերին ֆրանսիացի բժիշկ, գիտական վեներոլոգիայի հիմնադիր Ֆիլիպ Ռիկորը առաջինն է ապացուցել, որ սի ֆիլիսը և հոնորեան տարբեր հիվանդություններ են: Այդ նպատակով նա սի ֆիլիսով վարակել է՝ 600, իսկ հոնորեայով՝ 800 առողջ մարդու[12]: Արդյո՞ք թույլատրելի է նման կամայական վերաբերմունքը մարդու նկատմամբ ընդհանրապես: Բացասական պատասխանը ծագում է ինքնաբերաբար, բայց ըստ էության՝ բաց է մնում այն հարցը, թե դեպի ո՞ւր կամ ո՞ր ուղղությամբ պետք է քայլի գիտությունը և ի՞նչ կողմնորոշում է ունենալու արդի պայմաններում: Ժամանակակից գիտության սոցիալ-բարոյական և մարդասիրական հիմնահարցն օրըստօրե թողնում է վերացական բարոյա-խոսության ոլորտը, որովհետև մարդկության առջև ծառացած հիմնախնդիրները համաշխարհային հանրության շահերից բխող կենսականորեն կարևոր հարցադրումներ են, որոնք պետք է գտնեն իրենց հրատապ լուծումը: «Մենք միաժամանակ պետք է հոգանք այն մասին,- գրում է Մաքս Բորնը,- որպեսզի գիտական վերացական մտածողությունը չտարածվի ուրիշ բնագավառների վրա, որոնցում այն կիրառելի չէ: Մարդկային և բարոյական արժեքներն ամբողջությամբ չեն կարող հիմնվել գիտական մտածողության վրա»[13]: Յուրաքանչյուր գիտնական իր առօրեական աշխատանքներում պարտավոր է հետևել գիտության մեջ ընդունված ավանդույթներին՝ չխախտելով բանականության տրամաբանությունը, միաժամանակ չհակադրվելով սահմանված համամարդկային սկզբունքներին և նորմերին: Գիտական գործունեության բարոյական կարգավորման սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը կապվում է ոչ միայն հասարակական արժեքների և անձի կողմնորոշման, այլև գիտական գործունեության արդյունավետության վրա գիտության նորմերի մեխանիզմի ազդեցության հայտնաբերման հետ: Միանգամայն իրավացի է Թոմաս Կունը, որը կարծում է, թե

---

[12] *Տե՛ս* **Фракасторо Дж.**, *О сифилисе. Примечания, М. - Л., 1956, с. 72.*

[13] **Борн М.**, *Моя жизнь и взгляды, 1973, с. 128.*

միայն այդ նորմերի սահմաններում է, որ գիտնականը մնում է գիտնական, կանոնա- վոր գիտության ներկայացուցիչ[14]: Այսպես, օրինակ, բժշկի աշխատանքը, ըստ էության չի ընդունվի որպես լուրջ գիտական հետազոտություն, եթե նրա կողմից հետևողականորեն չեն պահպանվում մարդու նկատմամբ կենսաբժշկական, հոգեբժշկական և ընդհանրապես բժշկության և մարդա- բանական էթիկայի բոլոր այն հիմնարար սկզբունքները, որոնք ընդունվել են. 1) Համաշխարհային առողջապահության կազմակերպության, 2) Համաշխարհային բժշկական ասոցիացիայի, 3) Միջազգային բժշկական գիտական կազմակերպութ- յունների խորհրդի կողմից: Անկասկած, այդ փաստաթղթերի նշանակությունը զգալիորեն մեծ է մարդու վրա կատարվող փորձերի մարդասիրական նորմերն ու կանոնները պահպանելու գործում: Գերմանացի փիլիսոփա, գրող, լուսավորիչ Ի. Գ. Հերդերը գրում է. «Մի կողմ նետիր բոլոր անմարդկայինը, ձգտիր ճշմարտության, բարօրության և աստվածանման գեղեցկության, և դու կհասնես քո նպատակին»[15]: Ինչպես հայտնի է, բժշկական բարոյականությունը համարվում է մասնագիտական բարոյականության հնագույն համակարգերից մեկը, որի ծագումը սկիզբ է առնում դեռ Հիպոկրատից, որի երդման մեջ առաջին անգամ ձևակերպվեցին բժշկի վարքի բարոյական նորմերը: Անկասկած, այդ նորմերը դեռ այն ժամանակ հետամտում էին բուժվողի բարօրությունը, և բժշկից պահանջվում էր հիվանդի կյանքի պահպանման, տառապանքների թեթևացման և առողջությունը վերականգնելու համար անել այն ամենը, ինչ հնարավոր է: Այդ կապակցությամբ ժամանակակից գիտությունը շատ *սուր է դնում բժշկական բարոյականությանը և դեոնտոլոգիային վերաբերող հարցերը և միաժամանակ բացահայտում այնպիսի բարոյահիմաստասիրական նորմեր, սկզբունքներ, որոնք հեռու են «Հիպոկրատի երդումից»*[16]: Ա. Շվեյցերը ճիշտ էր նկատում, որ «Բարոյական է միայն կյանքի պահպանման և զարգացման բացարձակ ու համընդհանուր նպատակահարմարությունը, դեպի որը և ուղղված է երկյուղածությունը կյանքի հանդեպ: Ամեն մի այլ անհրաժեշտություն կամ նպատակահարմարություն բարոյական չէ. կամ ավելի կամ նվազ անհրաժեշտութ- յան անհրաժեշտություն է, կամ ավելի կամ պակաս նպատակահարմարություն»[17]:

Կյանքում միշտ էլ յուրաքանչյուր մարդ փնտրում է իր իսկական կենսիմաստալից ուղին, որն անհրաժեշտաբար նրան կանգնեցնում է այս կամ այն արժեքն ընդունելու կամ չընդունելու խնդրի առաջ, որտեղից և անհատը սկսում է տարբերել իր կյանքի իմաստի և ճշմարիտ այն արժեքը, որը ո՛չ միայն օբյեկտիվ պահանջ է, այլև այնպիսի միանշանակ կողմնորոշում, ձգտում և նպատակաուղղվածություն, առանց որոնց բացառվում է հասնել օբյեկտիվ

---

[14] *Տե՛ս* **Розов М. А.,** *Пути научных открытий (Вопросы философии, 1981, N 8).*

[15] **Гердер И. Г.,** *Идеи и философии в истории человечества, М., 1977, с. 134.*

[16] Տե՛ս **Билибин А. Ф., Царегородцев Г. И.,** *О клиническом мышлении (философско-деонтологический очерк), М., 1973.*

[17] **Швейцер А.,** *Культура и этика, М., 1973, с. 322.*

ճշմարտության: «Յուրաքանչյուր հետազոտող,- գրում է գերմանացի պոետ, մտածող և բնախույզ Գյոթեն,- պետք է իր վրա նայի որպես դատարան կանչված երդվյալ ատենակալի: Նրա պարտականությունն է հետևել՝ որքանո՞վ է գործը հաղորդված և որպես զեկուցում ամրացված ապացույցներով: Դրանից հետո նա իր համոզմունքը բերում է կարճառոտ հանրագումարի՝ անկախ նրանից, թե համընկնո՞ւմ է այն զեկուցողի կարծիքի հետ, թե՞ ոչ»[18]: Բոլոր դեպքերում, մարդու կյանքի արժեքը իմաստավորվում է նրա բարոյական դիրքորոշման մեջ, որի համապատասխան ելակետը անձնական և սոցիալական կեցության համընկնման ըմբռնումն է և սուբյեկտի այն պրակտիկ գործունեությունը, որը համապատասխանում է այդ համընկնմանը: *Անհատի էությունը մարդկային պատմության մեջ նրա թողած հանրօգուտ գործերի «ձեռագիրն է», որն անցել է համամարդկային պրակտիկայի իմաստավորման քուրայով:* Է. Զոլան գրում է. «Եթե դուք ինձ հարցնեք, թե ինչո՞ւ եմ ես արվեստագետ և այս աշխարհ եկա, ես կպատասխանեմ ձեզ՝ ես եկա, որպեսզի ես իմ կյանքն ապրեմ ի լուր ամենքի»[19]: Հիրավի, ժամանակակից գիտնականը գտնվում է հենց այդ վիճակում, որովհետև նա ապրում է ի լուր ամենքի: Ավելին, գիտնականի կոչման և դավանանքի էությունը մշտապես նրան բարոյապես պարտավորեցնում է, որ նա այդ ոճով պետք է իր կյանքն ապրի: Է. Զոլան հիանալի հասկանում էր, որ արվեստագետը բազմազանության մեջ է պատկերում յուրաքանչյուր անհատի սոցիալական կողմնորոշումը դեպի մյուս մարդիկ և դեպի համամարդկային արժեքները[20]: Պատմական զարգացման առանձին փուլում կարծես մարդկությունն ամբողջությամբ հանկարծ հայտնվում է իր պրակտիկ գործունեության գաղափարական ուղղվածության և իր կյանքի որոշակի ձևերի առջև, որոնք նրա համար կա՛մ նոր հորիզոններ են բացում՝ ապահովելով միաժամանակ անցում առաջադիմության նոր և ավելի բարձր աստիճանի, կա՛մ ընդհակառակը՝ տանում դեպի լճացում, վայրընթաց և ընդհանուր սոցիալական անկում: Չնայած տվյալ ընտրության բովանդակությունը տարբեր է, ձևն իր հերթին ներկայանում է իր նույնականոնության մեջ, քանի որ արձանագրում է մարդու սոցիալական ակտիվ գործունեության դրական կամ բացասական հստակ ուղղվածությունը: Անշուշտ, անհատականի և սոցիալականի համընկնումը, ավելի ճիշտ՝ *նրանց չափը,* անհրաժեշտության բերումով փոխվելով պատմության տարբեր փուլերում, իրենցով իսկ բնորոշում են մարդկային կյանքի թե՛ արժեքը, թե՛ իմաստը և թե՛ ինքնամբողջացումը: Սխալ կլիներ անձի կոնկրետ վարքի վրա տարածել մարդու կյանքի իմաստի արժեքը զուտ կենսաբանական ոլորտից բխեցնելու ամեն մի փորձ, որքան էլ այդ կարևոր լինի անհատի կենսագործունեության համար՝ բնազդների, ենթագիտակցականի, անգիտակցականի մակարդակում, *որովհետև*

---

[18] **Гете И. В.,** *Сочинения, т. 8, М., 1979, с. 411.*

[19] **Золя Э.,** *Собрание сочинений, т. 24, М., 1966, с. 31.*

[20] Նույն տեղում, էջ 18, 19:

այդ փորձը բնորոշվում և իմաստավորվում է միայն սոցիալ-բարոյական և սոցիալ-պատմական իր սեփական և առանձնակի կարգավորիչներով: Այդ գործոններով ձևավորվող մարդկային կյանքի իմաստը, սերտորեն կապված լինելով ո՛չ միայն հասարակական հիմնարժեքների ու իդեալների հետ, միաժամանակ ձեռք է բերում իր սեփական կարգավորիչ գործառույթը: Ի. Կանտը գրում էր, թե որպես մտածող էակ՝ միայն մարդը իր բանականությամբ ինքն է ձևավորում սեփական նպատակները, հետևաբար նա կարող է լինել գեղեցիկի իդեալ և կատարելության սահման[21]: Ըստ երևույթին, երբ այս տեսանկյունից ենք նայում, *ապա կյանքի վայելք կամ տառապանք և ծանրություն կրող մարդը չի կարող ունենալ որևէ օբյեկտիվ արժեք, եթե վայելքը և տառապանքն օբյեկտիվ կամ անհրաժեշտ սոցիալական հետևանք չեն թողնում: Նույն ձևով կարելի է ասել, որ սուբյեկտիվորեն ազատ մարդը չի կարող արժանանալ օբյեկտիվ-սոցիալական գնահատականի, քանի որ նրա ազատությունը չի մարմնավորվում գործունեության օբյեկտիվ հետևանքի մեջ:*

Այսպիսով, *կյանքի արժեքը՝ որպես անձի ինքնամբողջացման կատեգորիա,* արդյունք է, մի կողմից՝ արտաքին միջավայրի օբյեկտիվ պայմանների անմիջական ազդեցության, իսկ մյուս կողմից՝ մարդու այնպիսի ներքին՝ ներսուբյեկտիվ պահերի, որոնք ձևավորվում և կատարելագործվում են ուղղակիորեն հենց իր՝ մարդկային անձի բացառիկ, յուրաձև սոցիալական գոյության սահմաններում:

ЦЕННОСТЬ ЖИЗНИ КАК КАТЕГОРИЯ САМОИНТЕГРАЦИИ ЛИЧНОСТИ

МОКОЯН Г. Ш.

Резюме

В системе современного научного знания проблема человека становится одной из центральных. В той или иной форме, в тех или иных аспектах она исследуется и в общественных, и в естественных, и в технических науках. ***Обострение интереса к личности и его жизни как уникальной ценности имеет не только теоретическое, но и большое практическое значение*** и обусловлено глубокими ***антропологическими преобразованиями*** в современном динамичном мире.

[21] **Кант И.,** *Сочинения, т. 5, М., 1966, с. 469.*